

ԳՐԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՐՔ

Առհասարակ այն կարծիքը կը տիրէ, որ քրիստոնէութեան ժամանակաշրջանին այնքան շատ յարգուած գեղարուեստի այս ճիւղը — գեղագրութիւնը եւ գիրքերը պատկերագրաբանութիւնը — իսկապէս նորութիւն մը չէր:

«Ճշմարիտ է որ հին յոյներէն մեզ չեն հասած այս արուեստին վերաբերեալ գործեր, բայց մինչ մեզ հասած ժամանակաշրջաններէն գիտենք, որ անոնց մօտ «ի պատուի» է եղեր գեղագրութիւնը, եւ, զժառանգութիւնն ալ առհասարակ մշակուած է եղեր իր ամէն ձեւ ու եղանակներու մէջ*):

*

Թողնելով մշակոյթի աւելի հին երկիրները, եթէ հեթանոս Հռոմէն մեզ չեն հասած այս կարգի յուշարձաններ, պատճառը պէտք է վերագրել բարբարոսներու արշաւանքին հետեւող աշխարհաքանդութեան:

Գեղարուեստի պատմութեամբ եւ բանասիրութեամբ զբաղողներ ընդունած են, որ հին Հռոմը լիովին գիտակ էր նաեւ արուեստի այս ճիւղին եւ «ընհատորէն է նկարազարդ մագաղաթի պերճութիւնը»:

Հռոմ իր յոյն վարժապետներէն սորված էր այս. յոյներն ալ իրենց կարգին հին Եգիպտոսէն. իսկ ասոնք ալ աւելին հին արեւելեան ազգերէն:

Ամէն օր աւելի ու աւելի կը պարզուի, որ չինացիներու, հնդիկներու եւ պարսիկներու մօտ արուեստի այս ճիւղը ծանօթ էր անյիշատակ ժամանակներէ ի վեր:

Դեռ 19-րդ դարուն յայտնուեցաւ, որ Ամերիկայի հնագոյն քաղաքակրթական օրրան Եուքադան, Կուադէմալա եւ Մեքսիկոյի բնիկները յարգեր ու մշակեր են այս արուեստը:

Եգիպտոսի մէջ զտնուեր են շատ մը պա-

պիրոսներ, որոնց վրայ դեռ կը մնան դրուագի, ներկերու, անգամ ոսկեգոծութեան հետքեր:

*

Մինչեւ մեզ հասած տարեգրութիւններու մէջ յիշատակութիւններ կան կատարուած գործերու, գործելակերպերու, գործածուած նիւթեղէնի, վարպետներու եւ արուեստը զնահատող երեւելիներու մասին, որոնք ըրեր են ինչ որ կրցեր են գրուածքը պատկերագրաբան արակցութեամբ աւելի տպաւորիչ դարձրնելու համար*):

ՄԱԳԱՂԱԹ

Մարդկային ձեռքով գրուած գրքերու պատմութեան մէջ ամենէն ընդարձակ տեղը կը բռնէ մագաղաթը:

Կը պատմուի որ Քրիստոսէ առաջ 197-ին Բերկամայի թագաւոր Eumene Եգիպտոսի հետ թշնամացի էր այս պատճառով Եգիպտոսէն պապիրոսի ներմուծումը դադար էր: Բերկամայի քաղաքական տաղանակի այս օրերուն հնճարկեր են մագաղաթը: Այս պատճառով ալ մագաղաթը լատիներէն անունը Pergamenum:

Մագաղաթը՝ թէեւ ուշ տարարծուեցաւ, բայց լինելով աւելի ճկուն ու ամուր քան դասական պապիրոսը, լուրջ նպատակներու համար անոր գործածութիւնը գերազաս համարուեցաւ:

Մագաղաթի գործածութիւնը ընդհանրապէս յետոյ ալ պապիրոսը դեռ երկար ատեն գործածական մնաց այն պատճառով որ աւելի դիւրաւ ձեռք կը բերուէր եւ մանաւանդ անհամեմատ աժան էր:

*) Վերջիլիոսի գրքերուն վրայ յաճախ նկարուած էր հեղինակին կենդանադիր պատկերը (տես Geraud, էջ 137):

Օվիտիոսի մէկ բանաստեղծութեան մէջ պարզ ներկարգուած է, որ Հռոմի մէջ զիտէին մագաղաթը պատկերագրաբանութիւնը բոլոր ընդունուած տարրերն ու կերպերը, օրինակ՝ էջերը չըջանակող vignetteներ, գրքերու վերնագիր ամուրը, գլխաւորութիւնները գաւառի եւ խօսքի սկիզբը դիտող տառերը ինչ որ առանձնապէս աչքի ընկող կարճերով կամ ոսկիով շեշտուած պատկերներով կ'ընէին:

*) «Sycyone-ի հռահաւոր նկարիչ Pamphyles-ի ջանքերով սովորութիւն էր դարձեր, որ Յունաստանի մէջ երախաներ առաջ քան գրավարժութիւնը գրծարել կը վարժուէին:

«Մշակոյթի այլ կարգի բաներու պէս մանկավարժութեան այս մեթոտն ալ յոյներ մտցուցեր են նաեւ հին Հռոմ»: (Lecoy էջ 128-129):